

« 14 » փետրվարի 2022թ.  
N 3184

«Հետք» թերթի լրագրող  
Տիկին Ռ. Գրիգորյանին

(Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ)

Հարգելի տիկին Գրիգորյան

Երևանի «Աէրացիա» նոր կառուցված մաքրման կայանի (այսուհետ՝ ԱԿՄԿ) շահագործման հետ կապված Ձեր կողմից բարձրացված հարցերի կապակցությամբ ստորև Ձեզ ենք ներկայացնում մեր պարզաբանումները.

Վարձատուի (ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի) կողմից ԱԿՄԿ-ն ֆրանսիական «Վեոլիա Օ – Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» ընկերության կողմից Երևանում ստեղծված «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին (Վարձակալին) վարձակալության հանձնված չէ:

Համաձայն նշված կողմերի միջև կնքված Վարձակալության պայմանագրի Հավելված 2-ի 11 («Կեղտաջրերի մաքրման կայանների կողմից տրամադրվող ծառայություններ») կետի (3) ենթակետի, «Եթե Վարձատուն «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանի գործունեության բարելավման նպատակով որևէ ներդրում կատարի, ապա Վարձակալը պարտավոր է համագործակցել Վարձատուի հետ նշված ներդրումների իրականացմանն օժանդակելու ուղղությամբ: Եթե կատարված ներդրումների արդյունքում նախատեսվում է, որ Վարձակալը որևէ լրացուցիչ ծառայություններ տրամադրի, նշված ներդրումների իրականացումից հետո Վարձատուն և Վարձակալը պարտավոր են համաձայնության գալ լրացուցիչ ծառայությունների մատուցման պայմանների վերաբերյալ»:

Այս կապակցությամբ, թեև Վարձակալության պայմանագրի շրջանակներում կողմերի միջև եղել են որոշ քննարկումներ, սակայն հաշվի առնելով, որ նոր կառուցված կայանը դեռևս բերված չէ ավարտական տեսքի, ուստի և դրա «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից շահագործման որևէ առարկայական քննարկում դեռևս չի կայացել:

Ինչ վերաբերում է ԱԿՄԿ-ի շենքին և սպասարկման տարածքներին, ապա դրանք ևս հանձնված չեն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին, ուստի և չեն կարող օգտագործվել վերջինիս կողմից:

Հարգանքով՝

*Սևակյան*

Գլխավոր տնօրեն  
Մ. Շահինյան

